

ներ մտնելու գործը արդէն բաւական հասունացած է պատրիարքարանի և Պօլսի գործողների շրջանում:

Արանից մօտ քսան և հինգ տարի մշակված սահմանադրական կանոնադրութեան մէջ մտնելի փոփոխութիւնները, ինչպէս ամենքս էլ իրաւունք ունենալով սպասելու, ի հարկէ, պէտք է աւելի սահմանադրական բնաւորութիւն ունենային, այսինքն այդ փոփոխութիւնները նպատակ պիտի ունենային, աւելի մեծացնել ապակենտրոնականութեան սխտեման, քանի որ անկասկած, 25 տարեկան ընթացքում թիւրքահայերը աւելի ընտելացան ինքնավարութեան գործին, քան թէ նրանք կաւոր էին լինել սրանից ամբողջ քառորդ դար առաջ:

Բայց ինչպէս երևում է դէթ Պօլսից հաղորդած և «Մշակի» № 128-ի մէջ տպած տեղեկութիւններէ, բոլորովին մի այլ ձգտում է նկատուում Պօլսի պատրիարքարանի մէջ: Ահա թէ ինչ է ասված Կ. Պօլսից հաղորդած տեղեկութեան մէջ. «Խորհն պատրիարքը հրապարակեց մի քանի եպիսկոպոսներ անոնց հետ խորհրդակցելու համար, թէ արդեօք օգտակար է փոխել թեմական առաջնորդներու ընտրութեան եղանակը: Ըստ սահմանադրութեան առաջնորդները կընտրվին ուղղակի դաւառական ընդհանուր ժողովներէն, իսկ այժմ սկսած է կարելի մը գոյանալ թէ՛ լաւագոյն պիտի լինի, որ առաջնորդներն ընտրվին ուղղակի պատրիարքարանէն»:

Հաղորդելով այդ ուղղութեան արժանի տեղեկութիւնը, թղթակիցը իր կողմից աւելացնում է հետեւեալը. «Հայկազուն խնդիր մ'է այս, որ դիւրաւ չի լուծուիր, երկար վէճերու կարօտ է լուծուելու համար»:

Մենք կարծում ենք, որ ոչ թէ միայն երկար վէճեր կարող է յարուցանել խորհն պատրիարքի այդ դիտաւորութիւնը, այլ և ահագին աղմուկ և դիմադրութիւն կարող է նա առաջ բերել, եթէ Կ. Պօլսի գործողների մէջ յիշատի կայ դէթ մի խումբ, մի կուսակցութիւն, որ ըմբռնում և հասականում է թէ սահմանադրութեան ոյժը ժողովրդի հետ կապված լինելն է, և որ սահմանադրութեան ոգու հակառակ կենտրոնականութիւն մտնելը այդ նոյն սահմանադրութեան մէջ ուրիշ ոչինչ չէ նշանակում, բայց եթէ հեռացնել ժողովրդին ընտրողական իրաւունքները, թուլացնել տեղական ինքնավարութիւնը, և տեղական վարչութիւնների բոլոր ոյժը և իրաւունքները հեռացնելով մայրենի հողից տանել և կենտրոնացնել հեռու Կ. Պօլսի ազգային ժողովի և պատրիարքարանի ձեռքում:

Եթէ թիւրքահայերի սահմանադրութեան մէջ մի որ և է փոփոխութիւն պէտք է լինի, դա տեղական վարչութիւնների գործունէութիւնը և տեղական ինքնավարութիւնը աւելի մեծացնելու նպատակով պէտք է լինի: Հակառակ բնաւորութիւն ունեցող փոփոխութիւններ անկը՝ այսինքն միայն պատրիարքի իրաւունքների աւելի մեծացնելը կը նշանակէ ուղղակի սահմանադրութեան ոգու հակառակ գնալ:

Ոչ թէ միայն պատրիարքի իրաւունքների մեծացնելը, այլ նոյն իսկ Պօլսի ազգային կենտրոնական վարչութեան իրաւունքների լայնացնելը նոյնպէս կարող է գլալի կերպով վնասել թիւրքահայերի սահմանադրական ինքնավարական գործին, քանի որ մեզ ամենքս յայտնի է, որ Ազգային Ժողովի 140 անդամներից միայն 40-ը թիւրքաց Հայաստանից են, իսկ մնացած 100-ը Կ. Պօլսից:

Եթէ սահմանադրութեան մէջ որ և է փոփոխութիւններ պէտք է լինեն, առաջին փոփոխութիւններից մէկը պէտք է հէնց երեսփոխանների թիւի վերաբերութեամբ լինի. ամբողջ թիւրքաց Հայաստանի 3 միլիոն ժողովուրդը տալիս է 40 երեսփոխան, իսկ 200 հազար հայ բնակիչ ունեցող Պօլսը տալիս է 100 երեսփոխան, այսինքն Պօլսը 2½ անգամ աւելի երեսփոխաններ է տալիս, քան թէ ամբողջ Հայաստանը: Այս իսկ փաստը բաւական է ցոյց տալու, որ թիւրքահայերի սահմանադրութիւնը աւելի Պօլսի համար է շարադրված, քան թէ բուն Հայաստանի ժողովրդի համար:

Եւ ահա այժմ փոխանակ վերանորոգութիւն մտնելու այդպիսի անարգար և մի և նոյն ժամանակ անմիտ կանոնադրութեան մէջ, Պօլսի պատրիարքը ցանկութիւն է յայտնում աւելի փոքրացնելու Ժողովրդի իրաւունքը, և ցանկանալով մեծացնել իր իրաւասութիւնը, դիտաւորութիւն ունի իսկ ժողովրդից և իր ձեռքում կենտ-

րոնացնել առաջնորդներ նշանակելու գործն է: Եթէ Պօլսի նոր պատրիարքը և նրա խորհրդատուները կարծում են, որ թիւրքահայերի առաջնորդական գործերի այժման խառնակ վիճակը, և դաւառներում առաջնորդներ չը լինելը հետեւանք է այն հանգամանքի, որ առաջնորդները ընտրվում են նոյն իսկ ժողովրդից, և ոչ թէ պատրիարքից, շատ սխալվում են:

Եթէ Պօլսի պատրիարքները կարծում են, որ կենտրոնացնելով ամենամեծ իրաւունքները իրանց ձեռքում, և անպայման իշխան դառնալով առաջնորդներ նշանակելու գործում, կարող կը լինեն աւելի կանոնաւորել դաւառների գործերը, նոյնպէս շատ սխալվում են:

Երկուսից մէկը, — կամ այդ տեսակ ձգտում ունեցող մարդիկ ուղղակի պէտք է յայտնեն, որ ամեն չարիք դուրս է գալիս սահմանադրութիւնից, և նրա հետ սերտ կապված ապակենտրոնականութիւնից, և կամ եթէ հակառակն են ընդունում, այսինքն եթէ ընդունում են, որ սահմանադրական ինքնավարութիւնը օգտակար է ժողովրդի համար, այն ժամանակ պէտք է աշխատեն աւելի լայնացնելու ժողովրդի սահմանադրական իրաւունքները, պէտք է որքան կարելի է թուլացնեն կենտրոնականութիւնը, որպէս զի դրա հետ միասին լայնանան ժողովրդի ընտրողական և ինքնավարական իրաւունքները:

Բայց մենք այսօր ինչ ենք տեսնում. Պօլսի պատրիարքարանը աշխատում է սահմանափակել ժողովրդի այն իրաւունքը, որ սահմանադրութեամբ նա ստացել է սրանից նոյն իսկ քառորդ դար առաջ, կամ ուրիշ խօսքով ասած, պատրիարքարանը փոխանակ զէպի առաջ գնալու, աւելի էլ յետ է գնում... Դժբերակութիւն է:

Իսկ թէ ինչ գործնական վնասներ կուճեցայ այդ յետադիմութիւնը, այդ մասին մենք կը խօսենք մի այլ անգամ, և կապացուցանենք, որ առաջնորդներ նշանակելու իրաւունքը պատրիարքի ձեռքում կենտրոնացնելը շատ երկիւղելի և վնասակար կարող է լինել թիւրքահայերի համար:

Խ. Մ.

ԽՈՐԷՆ ՊԱՏՐԻԱՐԿԻ ՍՈՒԼԹԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՆԱԼԸ

Նորընտիր պատրիարքի Սուլթանի հետ ունեցած տեսակցութեան մասին Կ. Պօլսի լրագիրները հաղորդում են մանրամասն տեղեկութիւններ, որոնցից քաղելով առաջ ենք բերում հետեւեալը:

Նորընտիր Պատրիարք Խորէն Սրբազան նոյն յետմիջի 8-ին պատիւ ունեցաւ Սուլթանին ներկայանալու և յետոյ իւր պաշտօնական առաջին այցելութիւնը տուաւ Նախարարաց:

Ժամը 12-ին, Բ. Դրան արարողապետի օգնական Նէշէթ Էֆէնդի պալատական երեք կառքերով Պատրիարքարան եկաւ Պատրիարք Հօր քով և Ն. Սրբազանութեան հետ ճանաչալ ելան կայս. պալատ երթալու համար:

Առաջին կառքին մէջ բազմեցաւ Պատրիարք Հայրն, իւր քով ունենալով Նէշէթ Էֆէնդին, պատրիարքական կառքին առջնին կընթանար Թակոբ Մ. Վ. Աշուր, ձիաւոր ձիաւոր կրկնով պատրիարքական Ասան, և անոր առջնին երկու հեծակ բարապանը և ժամատուփաքը. Պատրիարքական կառքին կը հետեւէին չորս հեծակ վարչապետը: Երկրորդ կառքին մէջ բազմած էին Սիւմէն Արքեպիսկոպոս Սէֆէրեան և Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյ:

Ս. Պատրիարքն և իւր ուղեկիցը ժամը 2-ի մօտ Երւոյզի պալատը ժամանեցին:

Պատրիարք Հայրն, Նար-Պէյ և Սէֆէրեան Սըրբազանները, Սիւմէն պէյն ու գործակատար Աբրահան Էֆէնդին Սուլթանին ներկայանալու հրաւիրեցան:

Ունկնդրութեանը միջոցին Խորէն Պատրիարքն հետեւալ ուղերձը կարդաց թուրքերէն լեզուով:

«Օգոստոսփառ Կայսրդ իմ. Ձեր վեհափառութեան իրաւով հաստատուած ի պաշտօն Պատրիարքութեան Հայոց Կ. Պօլսոյ, պատիւ ունիմ իմ ծառայական խոնարհ շնորհակալութեան և երաւատագրութեան մատուցանել Ձեր Օգոստոսփառ ներկայութեան ընդունուելու առթիւ: Թէ իբրև հաւատարմի հպատակ և թէ իբրև եկեղեցական պաշտօնեայ, կրկնապէս իմ նուիրական պարտաւորութիւնս պիտի լինի ներկայ պաշտօնս վարել ըստ բարձր կամաց Ձեր վեհափառութեան: Առ այս յաջողուաւ համար, կաղանկմ որ Ձեր ծառային չը զլանաց կայսերական այն բարձր վստահութիւնն ու բարեհաճութիւնը զորս վայելած են իմ նախորդը յօրէ անտի Աշխարհակալ

Սուլթան Մէհմէտի Երկրորդի, որ հաստատած է զայս Աթոռ Պատրիարքութեան Կ. Պօլսոյ Հայոց Ազգն, որ պատիւ կը համարի օսմանեան հպատակութիւնն, և ամենայն հաւատարմութեամբ և անձնութեամբ փարած է Ձեր վեհափառութեան զահուն, երախտապարտ է այն անթիւ և անզին բարեաց և այն բարեկեցութեան համար զորս կը վայելէ ընդ հովանաւ այդ փառապանծ զահուն: Ի սէր իւր հպատակաց բարօրութեան ոչ մէկ նորոշ խնայող այսպիսի հայրագործ ինքնակալի մը իշխանութեան ներքե իրենց վայելած բարերարութիւններն հաւատարմի հայ հպատակները միշտ մեծաւ պարծանք կը հռչակեն ի լուր միայնսդ, և զիչըր ու ցերեկ չեն դադրիր աղօթել իրենց Օգոստոսփառ վեհապետին համար: Բարձրեալն Աստուած մեր Օգոստոսփառ և բարեգութ ինքնակալն ամասանս պահէ իւր փառապանծ զահուն վրայ, և ամենայն բարօրութիւն և յաջողութիւն շնորհէ Նորին Կայսերական վեհափառութեան Ամէն»:

Սուլթանն հաճոյանք ունէն դրաւ Պատրիարք հօր բանից և հետեւալ կրպիւ պատասխանեց:

«Իմ Նախահարցս հաստատած Պատրիարքական աթոռէն Ձեր նախորդին հրաժարականը ցաւ պատճառած էր ինձ: Գոհ եղայ Ձեր ընտրութիւնէն ի Պատրիարքութիւն, ճանչելով Ձեր փորձաւոր արժանիքը, խոհեմութիւնն և հաւատարմութիւնն: Իմ կայսերական ջանքս առարկայն է յառաջանել ամեն կարգի հպատակացս բարօրութիւնը, բարգաւաճումն և բարեկեցութիւնը: Ասոր փոխարէն կանկալեմ որ Հայ հպատակներս յարատեւ իրենց բարոյ ծառայութեան և հաւատարմութեան մէջ առ իմ Տէրութիւնս: Ձեր խոհականութիւնն ալ կանկալեմ որ այս մօտը շարունակ խրատէք զիրեք: Կը մաղթեմ որ ընդ երկար ժամանակ լինէ զարեք Ձեր այս պաշտօն և արժանանաք կայս. շնորհացս»:

Ապա Պատրիարք Հայրն բարեմաղթութիւն բրաւ, որից յետոյ Սուլթանը բարեհաճեցաւ հետեւալ խօսքերն ասել «Ձեր արթնքն դո՛ւ եմ. Աստուծով ուրիշ մօտ ժամանակ մը զԶեղ հրաւիրելով պիտի տեսնուիմ»:

Կայսերական դահլիճէն ելնելէն յետոյ Միւնիխ փաշա իւր ձեռք Ս. Պատրիարք Հօր կողմէն կախեց առաջին կարգի Մէհմէտի պատուանշանն զոր Սուլթանը բարեհաճած էր շնորհել: Արարողապետ փաշան Նար Պէյ սրբազանի յանձնեց երկրորդ կարգի Օսմանիյէ պատուանշան և Սիւմէն Սրբազանին՝ երկրորդ կարգի Մէհմէտի: Ապա Պատրիարքը իւր ուղեկիցներով մեկնեցաւ մի և նոյն հանդիսիւ:

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆԸ Կ. ՊՈԼՍՈՒՄ

Ինչպէս գիտեն ընթերցողները, յայտնի դերասան Աղամեան վերջին ժամանակներս ներկայացուցողներ տուեց Կ. Պօլսում: Ինչպէս երևում է, Պօլսի մեծախօս հայ հասարակութիւնը բաւական անտարբերութեամբ է վերաբերվել դէպի աղամեան դերասանի խաղը, և ահա այդ առիթով «Արեւիք» լրագիրը մի ողորդած նախադիմ կարդալով հասարակութեանը, ի միջի այլոց ասում է հետեւեալը:

«Ամօթ...»

Գրիչս կըմոտանայ՝ Աղամեանի կրկնի ցերեկուան ներկայացման սովորական նկարագրութիւնն ընելու համար: Համարութիւն մը, դառն, անողոր ճշմարտութիւն մը յայտնելու համար, մարդ յաճախ փախուստի ճամբայներ կը փնտռէ, — մի գուցէ սխալած ըլլաս դատողութեանդ մէջ: Սակայն, չէ, իրողութիւնն հոն կեցած է:

Պարզ բանը իրողութիւնը, Աղամեանի կրկնի ցերեկ իւր «Քին դերասանի» ներկայացումը տըւաւ գրեթէ իմպիւր թատերասրահի մը առջև:

Եւ ահա, քսան տարիէ ի վեր յեղեղել թէ մը տաւրական շարժում մը սկսած է. Կ. Պօլսոյ Հայոց մէջ, դպրոցներ կանգնել, լրագիրներ ու հանդէսներ հրատարակել, աշխատել որ ժողովրդեան մէջ մուտ գտնի Արուստին դադափարն որ միսթիարէ զինք իրական կենաց գծուծ տափաւորութիւններէն, ջանալ զարգանել ի նա զեղեցկին ճաշակը, և յանդիլ սա ողորմելի արդիւնքին զի Արուստին, իւր ամենէն իրական և շօշափելի արտայայտութեանը մէջ, այսպէս անարգութիւն Այսպէս ասա, պարծել թէ հայութիւնն իւր ծոցին մէջ անուցած է թատերական մեծագոյն տաղանդ մը որ Բեղերսպուրիի և Մոսկուայի թատերաբաններուն վրայ՝ հարկադրէ Ռուս ժողովուրդին ի սէր արուեստին լսելու լեզու մը որ բոլորովին օտար է իրեն, հրեւիլ ի լուր այն յաջողութեանց զորս կուենայ նա ամենուրեք և այն ներդրողներուն զոր կը շուային նմա ուսուրագիրը, — և երբ այդ արուեստագէտն, յետ տասնամյա բացակայութեան, իւր հայրենի քաղաքը վերադառնայ փառաց պատկն ի ճակատուն, թո-

ղու որ՝ յետ մի քանի ներկայացմանց՝ դատարկ սրահի մ'առջև ինքնիքն հետ խօսող վնաս յիւմար մը դերը խաղալ:

Ե՛հ, գիտեմ, բարբառները չը պիտի պակսին հիմակ. մենք Հայերս վարպետ ենք սքողելու մեր ընկերութեան աղտոտ վերքերը:

Բայց ո՛չ, այլ է բուն պատճառը: Ոչ ոք քաջութիւն կուենայ ըսելու թէ Արուստին ըմբռնումը դեռ շատ գեր ի վեր է մեր ժողովրդեան համար, որ շատ աւելի լաւ կը հասկնայ իւր մազազային ամենէն նուր հաշիւներէն քան արուեստին ամենէն նուր արտայայտութիւններէն: Այլապէս զից հասկնալիս ցաւալի արդիւնքն ալ մեր աչքին առջև է: Մենք անհնարին բաներ չենք պահանջեր մեր ժողովրդէն. սակայն երբ կը տեսնենք ժողովրդեան ամեն դասերուն, ու նախաւաւանդ բարձր կոչուած դասուն այս անտարբերութիւնն ամեն բանի նկատմամբ որ նիւթական ստոր հաշիւներու սահմանէն դուրս է, դառնակիւծ յուսահատութեամբ կը եղբակացնենք թէ փառած սրտերն և կուճած ուղեղները մեծամասնութիւն կը կազմեն տակաւին այս հայութեան մէջ, որ, ի Թիֆլիս, թող կուտայ զի Բաֆֆիի տղաներն Սոլդատայի բազարի զազրելի գոհներուն մէջ իրենց հօր գրքերը վաճառեն՝ ապրելու համար, և, ի Պօլս, այսպէս Արուստը կը խայտառակէ չուառարարը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— «Post», «Magd. Zeitung» և ուրիշ շատ լրագիրներ սկսեցին տպագրել յուզիչ յօդուածներ, աշխատելով ցոյց տալ, որ ներկայ քաղաքական դրութիւնը շատ փտանգաւոր ապագայ է խոտանում:

— Վերջին ժամանակներս բուլանժեանները սկսեցին լուրեր տարածել, որ Ֆրանսիայում պատրաստվում է պետական յեղափոխութիւն: Միւստոր-նախագահը յայտնեց պատգամաւորներին ժողովում, որ այդ լուրերի միակ նպատակն է ծածկել բուլանժեանների լարած որդալիքները ժողովրդի և կառավարութեան ուշադրութիւնից:

— Կօրուրդի պրինցը ցանկութիւն է յայտնել Կ. Պօլս գնալու: Այժմ այդ առիթով վիէննայից հեռագրում են, որ Սուլթանը դէմ է այդ բանին, այնպէս որ կարող է պատահել, որ Կօրուրդեան պրինցին չընդունեն Սուլթանի պալատում, նրա Պօլս եկած ժամանակը:

— Բէլգրադից հեռագրում են, որ երկրի բոլոր կողմերում եղող արմատական յայտնի գործիչներին ձերբակալեցին, և դրանով նրանց պրօպագանդան թուլացաւ:

— Կասսանեակ հրապարակով յայտնել է, որ ինքը և զենեքալ Բուլանժէ անհրաժեշտ փաստեր ունեն այն մասին, որ Ֆրանսիայում պատրաստվում է պետական յեղափոխութիւն:

— Բէլգրադի «Պաշտօնական լրագիրը» հերքում է այն լուրը, որ իբրև թէ կառավարութիւնը ճընշում է ընտրութիւնների ազատութիւնը և վախեցնում է ընտրողներին:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Խաղաղութիւն պատրաստվում են 1889 թւին տօնելու երեկի կոմպօզիտոր Վերդիի յօրերեանը: Խաղաղները կամենում են այդ յօրերեանին ազգային տօնախմբութեան կերպարանը տալ:

Վիէննայում այս օրերս մեծաւ խաղաղի ամենատաղանդաւոր հրապարակախօսներից մինը՝ Կարնո Պիզանի: Ինչպէս առհասարակ պատահում է իտալացի տաղանդաւոր գրականագէտների հետ, Պիզանի էլ երիտասարդ ժամանակ խիստ կերպով հաւածվեց իր ազատամիտ և ուսմկապետական գաղափարների համար:

Փարիզում ժողովների հակառակորդները՝ մըտադիր են կառավարութեանը խնդրել, որպէս զի շուտով հաստատվի այն օրէնքը, որը արգելում է երեխաներին ծխել: Վիճակագրական տեղեկութիւններից երևում է, որ ծխող երեխաների (9-ից մինչև 15 տարեկան) 70—80% հիւանդ են գանգան ջղային հիւանդութիւններով: շատերը աւելի ծանր տկարութիւն են ստացել:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՄՈՒՐԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 20 նոյեմբերի: Երէկ պետական

խորհրդում քննվում էր բաժնատերերին (участковъиладельцѣхъ) վերաբերող նախագիծը— Աստիճանական կայսրի թագաւորութեան 40-ամեակի առիթով, «Journal de St. Petersburg» լրագիրը ասում է, որ բոլոր արքունիքները գնահատում են Ֆրանց-Յոզեֆի կայսրի յատկութիւնները, և չէ նայելով քաղաքականութեան մէջ եղած անհամաձայնութիւններին, որոնք կարող են բաժանել կառավարութիւններին, յարգանքով են վերաբերում դէպի նրա ազնիւ ձգտումները, որոնցով նա ջանում է պահպանել իր հպատակների համար խաղաղութեան բարեկեցութիւնը՝ ներկայ յուղմունքների ժամանակ:

Վիեննայի 20 նոյեմբերի կայսր Ֆրանց Յոզեֆի ցանկանում է, որ նրա յօրհանումը տօնվէր բարեգործական գործերով:

ՓԱՐԻԶ, 20 նոյեմբերի Պատերազմական արտակարգ բնութեւնը հաշուում է 1/3 միլիարդ ֆրանկ:

ՓԱՐԻԶ, 20 նոյեմբերի Այսօր Բօլեմի յիշատակի տօնախմբութեան օրը խաղաղ անցավ. հանդիսագնացը բաղկացած էր ընդամենը 10,000 մարդուց. քաղաքային ինքնավարութեան խորհրդի նախագահը մի ճառ ասեց, որի մէջ փառաբանում էր Բօլեմին, իրեն հանրապետութեան պաշտպանի և յարձակվում էր բուլանժիստների վրա. վերջինները բացակայ էին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍՍ	
Նոյեմբերի 18-ին	
Ընդունել վրա 10 ֆունտ արծեւ . . .	97 75
Համարողի վրա 100 մարկ . . .	48 10
Փարիզի վրա 100 ֆրանկ . . .	38 35
Ոսկի . . .	7 80
Մաքսային կուպոններ . . .	156 25
Արծաթ . . .	1 18
Բարձրագույն դիվիզիաներ . . .	7 80
Պետական 5% տոմս 1-ին շրջանի . . .	98 25
— — — — — 2-րդ . . .	97 75
— — — — — 3-րդ . . .	97 50
— — — — — 4-րդ . . .	97 62
— — — — — 5-րդ . . .	97 37
— — — — — 6-րդ . . .	— —

Նոր 4% փոխառութիւն . . .	81 25
Արեւելեան 5% փոխառութիւն 1-ին շրջ. . .	97 25
— — — — — 2-րդ . . .	97 25
— — — — — 3-րդ . . .	96 62
Ներքին 5% առաջին փոխառութիւն . . .	270 75
— — — — — երկրորդ . . .	242 25
5 1/2% բէնտա . . .	101 75
Ոսկեայ բէնտա . . .	177 50
Եօթներորդ կոնսօլիդաց փոխառութիւն . . .	148 25
Նոր երկաթուղային բէնտա . . .	97 50
5% գրաւական թղթեր կալուած . . .	— —
— — — — — փոխ. կրեդ. ընկ. մետ. . .	91 37
— — — — — թղթադ. . .	97 62
Գրաւ. թղ. Ազնւ. բանկի . . .	97 62
5 1/2% գրաւական թղթեր խերսօնի կալուած բանկի . . .	97 50
6% գրաւակ. թղթ. Խարկովի կալ. բան. . .	97 75
— — — — — Պոլտավայի . . .	100 —
— — — — — Պետ. Տոկալ. . .	99 75
— — — — — Կիւնովի . . .	100 50
— — — — — Մօսկվայի . . .	100 50
— — — — — Բեսարաբ. Տաւր. . .	99 75
— — — — — Նիժ. Սամար. . .	100 50
— — — — — Վիլնայի . . .	99 —
— — — — — Թիֆլիսի—72 և — տ. . .	97 50
— — — — — Բաթումի—18 և — տ. . .	97 —
Վ. օլժակո-Կամսկի բանկի ակցիաները . . .	670 —
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ. . .	238 —
Ռիբինսկ-Բոլոգոյի ընկ. . .	83 50
Ս. Պետերբուրգի քաղաքային օրդն. գացիաներ . . .	92 25
Մօսկվայի քաղաք. օրդն. գացիաներ . . .	92 50
Օդէսայի . . .	92 75
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրդ. . .	82 —
Ս. Պետերբուրգի քաղաքի արտադրութիւնը թող է:	— —

ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ	
ԱՆԷՔՍԱՆԻՐՈՒՄ. Ս. Տ. Ս. Լրագրի հասցէն հաղորդելու «Մշակ» հետեւայ, 129-որդ համարում թէ բաժանորդագրութիւնը բացված է, այդ կարող էր տեսնել լրագրիները:	
Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ	

Նախախա և Մակար Վարդիկեանցները ջաւօք սրտի յայտնելով իրանց բարեկամներին և ծանօթներին, առաջինը իր որդու և երկրորդը իր եղբոր ԳԵՈՐԳ ՎԱՐԴԻԿԵԱՆՑԻ մահը, խնդրում են շնորհ բերել յուղարկաւորութեան, որը լինելու է նոյեմբեր ամսի 23-ին, առաւօտեան ժամի 10-ին, դէպի Վանքի մայր-եկեղեցին: 1—1

Մամուլի տակն է և շուտով լոյս կը տեսնի իմ թարգմանած՝
«ԲՆԱԻՈՐՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ»
հեղ. պրօֆէսոր Ա. Գարբիէլի
Թէ և ցանկութիւնս էր, ինչպէս և յայտարարել էի, մինչև սեպտեմբեր լոյս ընծայել աշխատութիւնս, բայց ինձանից անկախ պատճառով, չը կարողացայ ժամանակին կատարել խոստումս: Ուստի ներողութիւն խնդրելով յարգելի բաժանորդներէր, խոնարհաբար խնդրում եմ այն յարգելի անձանց, որոնք բաժանորդներ գտնելու նեղութիւնը յանձն էին առել, բարեհաճեն ուղարկել բաժանորդագրութիւնը և գրամբ հետեւեալ հասցէով. Тифлисъ, учителью Арм. Дух. Семинаріи Нерсисянъ, Григорію Шахъ-Будагянцъ.
Գրիգոր Շահբուդահան

ԲԺԻՇԿ ՊՐԷՕԲՐԱԺԷՆՍԿԻ
Մանուսորապէս բժշկում է ելկարականութեամբ, ֆարագական և դալմանական հոսանքով ձնաքերի և ոտների անդամաւորութիւնից, թէվմատիլմից, ներկային հիւանդութիւններից և կոնտրակտուրայից (միանունների անդամաւորութիւն), բժշկում է կոյրերին և խուլներին անդամաւորութիւնից և նոյնպէս ընդունում է կանացի հիւանդութիւններով և սիֆիլիսով տկարներին: Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան 9 ժամից մինչև 12 ժամ և երեկոյեան 7 ժամից մինչև 8 ժամ, Միքայէլեան փողոցում, Բէկիւսովի տանը, № 103. 2—10

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ. Հինգշաբթի, նոյեմբերի 24-ին, ԱՆԱՏՈԼԻԱ (ANATOLIE) չորեքուշ, նաւապետ ԲՕՇԷԼ (BOSCHEL) զուրա կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէյ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմօյլուի տան, Նարեքէժնայա, և Թիֆլիսում Նախկին Արշուրէի գալլերեան, № 103. 2—3 (2. հ. և.)

ԳՈՐԾԱՐԱՆ
ԱՐՈՒՆԵՍԱԿԱՆ, ՄԻՆԵՐԱԿԱՆ, ՄՐԳԱՑԻՆ ԵՒ ԳԱՋԱՑԻՆ ՋՐԵՐԻ
Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ
ԲԱԹՈՒՄՈՒՄ
(Ցէրկովնայա փողոցում, Կոնստանտինովի տան կից, որտեղ գետնովում է Լօբկօ և ընկ. տպարանը)
Պատիւ ունեմ յայտնելու պ. պ. բժիշկներին և յարգելի հասարակութեանը որ ես նորից վերադարձել եմ Նախաւոր կերպով ընդարձակելով իմ գործարանս, աշխատելով բաւականացնել ԺԱՄԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ բոլոր ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ, ջրերի պատրաստութեան վերաբերմամբ: Գործարանի կառավարութիւնը ես յանձնեցի ՖԱՐՄԱՅԻՍՑԻ մի ՊՐՈՎԻԶՈՐԻ, որ փորձառութիւն է ստացել Ռուսաստանի մայրաքաղաքներում: Գործարանն ունի ամենամանր ձէլի մեքենաներ, նոյնպէս և քիմիկի հաշակարար ՖԻԼՏՐԻ, որը միակ է, որ արդիւթեամբ մաքրում է ջրերը կապարից, կրից, երկաթից, օրգանական, միներալական մասնիկներից ու աղերից և զերազանցում է բոլոր միւս ֆիլտրներից իմ մեքենայական և քիմիական գործողութեամբ: Պրօվիզորը մշտապէս գտնվում է և անձամբ պարապում է իմ գործարանում: Շնորհով այն օժանդակ միջոցների, որ տալիս է դիտութիւնը անալիտիկական քիմիայի ձեւով, այսուհետեւ իմ գործարանում կը պատրաստվեն, բացի դէղերեան, մրգային և դաղային ջրերից, բոլոր ՄԻՆԵՐԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՋՐԵՐԸ, ինչպէս օրինակ՝ ՎԻՅԻ, Իմօր, Կարլսբադի, Մարիենբադի ջրերը, լուծողական ջրերը բոլոր յայտնի աղբիւրների և այլն, հետեւելով յայտնի հետազոտողների տուած կանոններին: Արուեստական միներալական ջրերը, որոնք այժմ խորհուրդ են տալիս ընդունել հաշակարար բժիշկները, կարող են ոչ թէ միայն փոխարինել բնական ջրերին, բայց և ունեն մի քանի գերազանցութիւններ. նրանք կարող են միշտ թարմ գրութեան մէջ ձեռք բերվել, մի և նոյն ժամանակ պարունակելով իրանց մէջ ամբողջութեւն դաղերի աւելի մեծ քանակութիւն, այդպիսով աւելի ախտօրէի դառնալով խմելու համար և աւելի շուտ ներգործելով հիւանդ կազմուածքի վրա: Աւելորդ չեմ ասել որ ես միշտ աշխատում եմ պահել գործարանս կատարեալ մաքրութեան մէջ և վերաբերվել դէպի գործն ամենամեծ ճշգրտեամբ և բարեխղճութեամբ, որի մասին յարգելի հասարակութիւնը կարող է համոզվել անձամբ այցելելով գործարանս ամեն ժամանակ: Ջարձատրութիւններից խուսափելու համար, խոնարհաբար խնդրում եմ իմ ջրերի գործածողներին պահանջել որ իմ բոլոր արդիւնքները կրեն իմ ֆիրմայի նշանակը, քանի որ ուրիշ գործարաններ կարող են ի չար գործածել հասարակութեան հաւատարմութիւնը: 44—50 (ե)

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր
ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԻՄԱՆՑ
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր
Ա Ռ Ա Ռ Օ Տ Ն Ե Ր Ը
ՆԱԽԱՍԱՐԴՆԱՆ—9—11 ժ. վիրաբուժական, նաև ատամնացաւի, սիֆիլիսի և աչքի ց.
ՐՈՒԳՎՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆ—11 1/2—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԵՆԿԵՎՍԿԻ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի ց. և սիֆիլիսի:
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիրակի կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիրակի:
ԵՐԵՎԱՆԵՐԸ
ԳԱՂՈՄՍԿԻ—4 1/2—5 1/2 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.
ՆԱԽԱՍԱՐԴՆԱՆ—5 1/2—6 1/2 ժ.
ՓՈԽԻՆԵԱՆ—5 1/2—6 1/2 ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրօտերապիա):
Հիւանդանոցումն է մահ կ ա բ ա Ր Ճ Ո Ւ Հ Ի Մ Օ Ղ Ե Ր:
ՎՃԱՐ—50 Կ.: Համախորհրդի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ:
Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԽԱՍԱՐԴՆԱՆ

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.
ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
(ՄԵՍՍԵՂԻ ՄԱՐԻՏԻՄ)
Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ:
Ուրբաթ, 25 նոյեմբերի, (7 դեկտեմբերի) ԲԱԹՈՒՄԻՑ զուրա կը գնայ շողեհաւ TIGRE (ՏԻԳՐ) նաւապետ FABRE (ՖԱԲՐ), մանկով Կ. Պոլիս, Պորտ-Վաչօր և Լակադար Ագէնաները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գ. ԷՍԵՆՃԵՐԻ, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԵՈՐԳ ՀԵՋՈՒԲԵԱՆ ՀԵՋՈՒԲԵԱՆ:
2—2

ԿՈՇԿԱԿԱՐԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ
ԱՂԱՍԻ ՏԵՐ-ՋԱՔՍԵԱՆԻ
Գօլովնակի, տուն Բէյկերի, № 11.
Ընդունում է կանանց և տղամարդոց ամեն տեսակ կօշիկների պատէրներ, ՋԱՓԱՌՈՐ ԳՆԵՐՈՎ. պատրաստում են շուտով: Պատէրները ընդունվում են խանութում. պատրաստելուց յետոյ կարելի է ստանալ միայն խանութում. տուն չէ ուղարկվում:
2—10

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑ
Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ր
ԱՐԻՍՏՈՂՈՄ ՅՈՎՀԱՆԵՍԵԱՆՑԻ
ՌՈՒՍԵՐԷՆԻՑ-ՀԱՅԵՐԷՆ ԲԱԹԳԻՐԻ
ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ
Գինն է 3 ռուբլի, ճանապարհի ծախսը գնողի վրա է:
Միանուագ քսանից աւելի գնողին զիջումն կը լինի:
Վաճառվում է ԲԱՅԱՌԱՊԵՍ Խիդիկէի և ընկ. գրալաւառանցում, Թիֆլիս, Գօլովնակի Պրօսպեկտ, առաջին Գիմնազիայի հանդէպ:
18—40